Նունե Ջոմարդյան
ԵՄՀ միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի պատասխանատու, իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, նույն ամբիոնի հայցորդ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Հոդվածում ներկայացվել է սոցիալական արդարության սահմանադրաիրավական բնութագիրը: Նշվել են սոցիալական արդարության սկզբունքի փաստացի դրսևորման մեջ առկա ցուցիչները, վերլուծվել են առավել կարևոր ցուցիչների առանձնահատկությունները: Հեղինակն առաջարկել է սոցիալական արդարության իր սեփական բնորոշումը:

Հիմնաբառեր. սոցիալական արդարություն, սոցիալական շուկայական տնտեսություն, ցուցիչ, կենսաապահովման նվազագույն զամբյուղ, մարդկային զարգացման համաթիվ, նվազագույն ամսական աշխատավարձ:

Անկախ պետականության վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետության առջև ծառացած մի շարք հրատապ խնդիրներ պահանջեցին սահմանադրական լուծումների մակարդակում սկզբունքային նոր մոտեցումներ ձևավորելու անհրաժեշտություն: Նորացված իրավաընկալման մեթոդական հենքում դրվեց «անցումը իշխանակենտրոն սահմանադրական լուծումների համակարգից մարդակենտրոն համակարգի»[1]: Այս տեսանկյունից հետապնդվող առաջնահերթ նպատակների շարքին դասվեց սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի հետևողական իրացման և դրա համար ծրագրանպատակային քաղաքականություն իրականացնելու առավել հստակ սահմանադրական երաշխիքներ ստեղծելու անհրաժեշտությունը[2]: Նախանշված նպատակներին համապատասխան՝ 2015թ-ի սահմանադրական փոփոխություններն ամրագրեցին նորմեր՝ ուղղված սոցիալական պետության զարգացման հայեցակարգի հետագա խորացմանը: Այս գործընթացում կարևոր նշանակություն ձեռք բերեց սոցիալական արդարության հստակ ձևակերպումը Սահմանադրության մեջ[3]: Ահա թե ինչու Սահմանադրության 11-րդ հոդվածն ամրագրեց, որ ՀՀ տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից: Երևան, Հոկտեմբեր - 2014թ., էջ 8:

[2] Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն)/ Գ.Բ. Դանիելյան, Վ.Ա. Այվազյան, Ա.Ա. Մանասյան.– Եր.: Հայրապետ հրատ., 2015, էջ 20:

[3] Չնայած այն հանգամանքին, որ սոցիալական արդարությունը որպես այդպիսին մինչև 2015թ փոփոխությունները ՀՀ Սահմանադրությունում հստակորն արտահայտված չէր, այնուամենայնիվ առկա էին նրա առանձին տարրեր: Բացի այդ, սոցիալական արդարությունն իր նորմատիվ ամրագրումն էր ստացել ընթացիկ օրենսդրությունում: Օրինակ՝ Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենքը:

Առաջին հայացքից թվում է թե 11-րդ հոդվածը սոցիալական արդարության էությունը սահմանափակում է տնտեսական բաղադրիչով և, որ դրան կարելի է հասնել սոսկ տնտեսական հարաբերությունների կարգավորման միջոցով: Հարց է առաջանում՝ արդյո՞ք սոցիալական արդարությունը նույնանում է տնտեսական արդարության հետ:

Նշված հարցին ճիշտ պատասխանելու համար վերլուծենք սոցիալական արդարության բնորոշման մի շարք տեսակետներ:

Ամենից առաջ ընդգծենք, որ տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OESD) ձևակերպմամբ սոցիալական արդարությունն իր ժամանակակից ընկալմամբ, այն է՝ սոցիալական շուկայական տնտեսության գոյության պայմաններում, հանդիսանում է «ցանկացած քաղաքական ընկերակցության լեգիտիմության և կայունության հիմնարար բաղադրիչը»[4]:

Մ.Նովակը սոցիալական արդարություն հասկացությունն օգտագործում է, որպեսզի ընդգծի օրենքի կարգավորիչ դերը հարստության, եկամուտների և իշխանության վերաբախշման հարցում[5]:

Մի շարք հետազոտողերի կարծիքով սոցիալական արդարությունը գործում է հավասարապաշտական (էգալիտար) հասարակությունում, որը հիմնվում է հավասարության և համերաշխության սկզբունքների վրա, հասկանում և գնահատում է մարդու իրավունքները, ճանաչում յուրաքանչյուրի արժանապատվությունը[6]:

Օ. Սիդարենկոն նշում է, որ սոցիալական արդարության սկզբունքը նախևառաջ ենթադրում է երաշխիքներ յուրաքանչյուր անձի համար՝ ունենալու աշխատանքի իրավունք՝ իր կարողություններին և որակավորումներին համապատասխան, ստանալու աշխատավարձ՝ կախված աշխատանքի որակից և քանակից, ունենալու ինքնաբավության և սեփական բարեկեցության բարձրացման հնարավորություն: Երկրորդ՝ դաստիարակության, կրթության և սոցիալական աջակցության համակարգի միջոցով հասարակության բոլոր անդամների համար հավասար մեկնարկային պայմանների ստեղծում և նոր միայն քաղաքացիների քաղաքական և իրավական հավասարությունից անցում վերջիններիս սոցիալական հավասարության: Երրորդ՝ պետական և հանրային ինստիտուտների միջոցով ընդունելի կենսամակարդակի ապահովում խոցելի խավերի և առանձին քաղաքացիների համար, ովքեր չունեն աշխատելու և իրենց կենսամակարդակն ինքնուրույն ապահովելու հնարավորություն[7]:

Վ.Ե.Չիրկինի մեկնաբանմամբ ՌԴ Սահմանադրությունում ամրագրված սոցիալական արդարության սկզբունքի բովանդակությունը՝ բացահայտող հիմնական տարրերն են ոչ միայն սոցիալական պետությունը, տնտեսական, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցու-

---

[4] Տե՛ս Social Justice in the OECD – How Do the Member States Compare? Sustainable Governance Indicators 2011, էջ 11:

[5] Տե՛ս Novak, Michael. Defining Social Justice. December 2000. https://www.firstthings.com/article/2000/12/defining-social-justice (մուտք՝ 28.04.2018):

[6] Տե՛ս Joseph Zajda, Suzanne Majhanovich and Val Rust. Education and SocialJustice: Issues of Liberty and Equality in the Global Culture// Education and SocialJustice, The Nitherlands, Springer, 2006, էջ 1:

[7] Տե՛ս Ольга Сидоренко Социальная справедливость как основополагающий принцип устойчивого развития// Держава та суспільство, էջ 161, http://www.kbuapa.kharkov.ua/e-book/putp/2013-2/doc/4/02.pdf (մուտք՝ 28.04.2018):

թյունը, սեփականության ձևերի բազմազանությունն ու հավասարությունը, միասնական տնտեսական տարածքը, սոցիալական ծառայություններն ու սոցիալական ապահովությունը, այլ նաև մարդը՝ որպես բարձրագույն արժեք, ժողովրդի իշխանությունը՝ որպես սոցիալ-քաղաքական երևույթ, ժողովրդավարական պետությունը՝ որպես այդ իշխանության քաղաքական ձև, կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ստեղծման ազատությունը, գաղափարախոսական բազմակարծությունը, տեղական ինքնակառավարումը և այլն: Իհարկե, այս ցանկը կարող է քննադատական որոշ քննարկումների տեղիք տալ, բայց, այնուամենայնիվ, այստեղ ընդգծվում է սոցիալական արդարության տարրերի բազմազանությունը[8]:

Հեղինակի կարծիքով՝ վերը նշված մոտեցումներն իրավացիորեն բնութագրում են սոցիալական արդարության տարբեր կողմերը և, հիմնվելով դրանց վրա, կարող ենք եզրակացնել, որ, անկախ այն հանգամանքից, թե ինչպիսին է սոցիալական արդարության գաղափարի ձևակերպումը երկրի սահմանադրությունում[9], այն իր մեջ ներառում է տնտեսական, սոցիալական, քաղաքական և բարոյամշակութային կյանքի տարրեր, ապահովում է տնտեսական հարաբերությունները կարգավորող նորմերի փոխկապվածությունը բոլոր սահմանադրական ինստիտուտների և իրավական միջոցների հետ, ձեռք է բերում հիմնարար (բազային), սկզբունքային նշանակություն մարդու և հասարակության կեցության, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության ամրապնդման համար: Չէ՞ որ վերջինս հռչակված է ՀՀ ռազմավարության նպատակի և ուղղությունների համար[10]:

Հեղինակը կարևորում է ընդգծել նաև այն հանգամանքը, որ արդարության պահանջը միշտ էլ վերաբերել է իրավունքին, հանդիսացել է նրա ներքին հատկությունն ու որակը: Ինչ վերաբերում է սոցիալական արդարությանը, ապա նրա պահանջները ճանաչվում ու բավարարվում են այն չափով, որ չափով որ դրանք համաձայնեցված են իրավական համընդհանրության և հավասարության հետ[11]:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է, իսկ ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների՝ մարդը բարձրագույն արժեք է, իսկ մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը նշում են, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են, և որ այդ իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Հետևաբար, սոցիալական արդարությունը ոչ թե ժողովրդավարական պետության բարի կամքի դրսևորում է կամ սոսկ եկամուտների, նյութական բարիքների վերա-

---

[8] Տե՛ս Чиркин В.Е. Социальная справедливость и российская конституция //Социальная справедливость и гуманизм в современном государстве и праве /отв. ред. Т. А. Сошникова: материалы Международной научной конференции.— М.: Изд-во Моск. гуманит. ун-та, 2015, էջ 22:

[9] Սոցիալական արդարությունը տարբեր սահմանադրություններում ունի տարբեր ձևակերպում, այն ամրագրվում է և՛ որպես սկզբունք, և՛ ոպես նպատակ:

[10] Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2018-2023 թվականների ռազմավարության նախագծի 3-րդ դաժնի 1-ին կետը: https://www.e-draft.am/projects/594/about (մուտք՝ 28.04.2018):

[11] Տե՛ս Нерсесянц В. С. նշվ.աշխ., էջեր 29 և 48:

բաշխում, այլ՝ անհատի արժանապատիվ ապրելու, պաշտպանվածության և ազատ զարգացման, հասարակական համերաշխության, պետության կայուն զարգացման և խաղաղության ապահովման սահմանադրական սկզբունք և իրավական նորմերում ամրագրված համընդհանուր պահանջ (ունիվերսալ և հրամայական):

Սոցիալական արդարության սկզբունքը՝ որպես սահմանադրական իրավունքի ընդհանուր սկզբունքների բաղկացուցիչ մաս, հասարակական հարաբերությունների կարգավորումն իրականացնում է ոչ թե անմիջականորեն, այլ սահմանադրաիրավական կոնկրետ նորմերի միջոցով՝ մարմնավորվելով այդ նորմերում և պետական իշխանության մարմինների իրավակիրառ գործունեության մեջ: Տվյալ նորմերի ուսումնասիրությունից էլ պարզ է դառնում, որ սոցիալական արդարության սկզբունքն իր փաստացի դրսևորման մեջ ունի ցուցիչներ կամ այլ կերպ ասած՝ չափանիշներ, որոնց միջոցով հնարավոր է գնահատել պետության ուժեղ և թույլ կողները[12]:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը որպես ցուցիչներ է դիտարկում հետևյալ չափանիշները՝

1. աղքատության կանխարգելում,
2. կրթության մատչելիություն,
3. ներգրավվածություն աշխատաշուկայում,
4. սոցիալական համախմբվածություն և խտրականության արգելում,
5. առողջություն,
6. սերունդների միջև արդարություն (Intergenerational justice)[13]:

Մերկելի և Գիբլերի կարծիքով՝ առաջին երեք չափանիշներն ունեն առավել գաղափարական արժեք և ավելի մեծ դեր են խաղում սոցիալական արդարության ինդեքսի ձևավորման մեջ[14]:

Ըստ Վ.Ե.Չիրկինի՝ սոցիալական արդարությունն ունի երկու շաղկապված կողմ՝ ընդհանուր սոցիալական և կոնկրետ հասցեական, որոնք հեղինակը բնութագրում է որպես սոցիալական արդարության սահմանադրական ցուցիչներ: Ընդհանուր սոցիալական բնույթի ցուցիչների շարքին են դասվում սոցիալ-տնտեսական (օրինակ՝ կրթության իրավունքը, առողջության պահպանումը և այլն) և որոշ այլ իրավունքներ (օրինակ՝ երկրի ընդերքի պատկանելը ժողովրդին, նվազագույն կենսամակարդակի սահմանումը): Կոնկրետ հասցեական բնույթի ցուցիչներն են օրինակ՝ աշխատավարձի նվազագույն չափը, ուղղված են բնակչության որոշակի շերտերին, խմբերին (աշխատողներին, երեխաներին, թոշակառուներին և այլն), ինչպես նաև կյանքի դժվարին պայմաններում հայտնված կոնկրետ անհատներին վերաբերող դրույթները[15]:

---

[12] Տե՛ս Social Justice in the OECD – How Do the Member States Compare? Sustainable Governance Indicators 2011, էջ 6:

[13] Տե՛ս Social Justice in the OECD ……., էջեր 6-10:

[14] Տե՛ս Merkel, Wolfgang and Heiko Giebler. 2009. “Measuring Social Justice and Sustainable Governance in the OECD.” In Sustainable Governance Indicators 2009. Policy Performance and Executive Capacity in the OECD, edited by the Bertelsmann Stiftung. Gütersloh: Bertelsmann Stiftung, էջեր 187-215:

[15] Տե՛ս Чиркин В.Е. Социальная справедливость в конституционном праве// Журнал российского права, 2016, № 7, էջ 9:

Մեր կարծիքով վերը նշված երկու մոտեցումներն ունեն ընդհանրություններ, քանի որ սոցիալականացված տնտեսության զարգացման հիմնական նպատակը ընդհանուր բարեկեցությունն է:

Հիմնվելով Վ.Ե.Չիրկինի դասակարգման վրա դիտարկենք, թե ինչպես են այս ցուցիչներն արտահայտվում սահմանադրական իրավունքում և իրավունքի այլ ճյուղերում:

Որպես ընդհանուր սոցիալական բնույթի ցուցիչներ վերցնենք կենսաապահովման նվազագույն զամբյուղը և մարդկային զարգացման համաթիվը (մարդկային զարգացման ինդեքս), իսկ կոնկրետ հասցեական բնույթի ցուցիչների համար՝ նվազագույն ամսական աշխատավարձը:

Կենսաապահովման նվազագույն զամբյուղ. աղքատության պայմաններում անձի սոցիալական մասնակցությունն ու կյանքի ինքնակազմակերպումն իրականացվում են մեծ դժվարությամբ: Այդ իսկ պատճառով աղքատության արդյունավետ կանխարգելումը կարևոր դեր է խաղում սոցիալական արդարության չափման գործում: Կենսաապահովման նվազագույն զամբյուղի սահմանումը հնարավորություն է տալիս ստացվող եկամուտների հիման վրա բացահայտել աղքատության մակարդակը և օգնում է իշխանություններին մշակել ու իրականացնել համապատասխան պետական սոցիալական քաղաքականություն:

Բավարար կենսամակարդակի իրավունք է սահմանում Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետը, ըստ որի դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի և նրա ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը: Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով նշված միջազգային փաստաթուղթը, պարտավորվել է միջոցներ ձեռնարկել բնակչության բավարար կենսամակարդակի ապահովման համար: ՀՀ Սահմանադրությունը կենսաապահովման իրավունքի վերաբերյալ նորմեր չի պարունակում, սակայն այդ արտասովորությունների շրջանակներում 2004 թվականի մարտի 16-ին ընդունվել է «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» օրենքը, որի 3-րդ հոդվածի համաձայն կենսաապահովման նվազագույն զամբյուղը մարդու առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ, միջազգայնորեն ընդունված ֆիզիոլոգիական, առողջապահական և սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործակիցներով հաշվարկված ոչ պարենային ապրանքների և ծառայությունների կազմն ու կառուցվածքը սահմանող նվազագույն քանակն է:

Մարդու կենսունակությունն ապահովող ապրանքների և ծառայությունների ամբողջությունը տարբեր երկրներում տարբեր է և ներառում է տասնյակ անվանումներ, օրինակ՝ Հայաստանում՝ 470 ապրանք և ծառայություն, Ռուսաստանում՝ 200, Գերմանիայում՝ 600, Մեծ Բրիտանիայում՝ 700: Այս ցանկն արտահայտում է ժողովուրդների կյանքի տարբեր պայմանները: Այսպես, Ֆրանսիայում կենսաապահովման նվազագույն մակարդակի մեջ մտնում է ռեստորան այցելելու որոշակի քանակ, Մեծ Բրիտանիայում՝ գոլֆ խաղալու համար վճարը, Գերմանիայում՝ գարեջուրը:

Կենսաապահովման նվազագույն մակարդակը մշտական մեծություն չէ. այդ տվյալները անընդհատ փոփոխվում են: Այսպես, 2017թ-ին այն Լյուքսեմբուրգում կազմել է 2000, Բելգիայում՝ 1500, Ֆրանսիայում՝ 1030, Իսպանիայում՝ 645, Հունաստանում՝ 360, Ռումինիայում՝ 218, Բուլղարիայում՝ 184, Ռուսաստանում՝ 156 եվրո: Յուրովի է լուծում այս խնդիրը Իսրայելը, որտեղ այդ մեծությունը կախված է ընտանիքի անդամների քանակից. 25-ից 55 տարեկան միայնակ անձը պետությունից ստանում է 322, ամուսինները՝ 443, մեկ երեխա ունեցող ընտանիքը աշխատանքի կորստի դեպքում ստանում է 482, իսկ երկու երեխա ունեցողը՝ 540 եվրո: Առավել ցածր մակարդակ ունեն Մոլդովան՝ 89, և Ղազախստանը՝ 72.2 եվրո[16]:

Հայաստանում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2017թ. IV եռամսյակի դրությամբ կազմել է 57 417.5 դրամ[17], որը մոտավորապես կազմում է 105 եվրո[18]: Ինչպես տեսնում ենք, Հայաստանը առավել մոտ է կանգնած ցածր սպառողական զամբյուղ ունեցող երկրներին:

Հայաստանում աղքատության իրական պատկերը հասկանալու համար նշենք մի քանի վիճակագրական թվեր:

ՀՀ-ում նվազագույն պարենային զամբյուղի արժեքը սահմանելու համար հաշվարկվում է սպառվող սննդանյութերի անհրաժեշտ միջին կալորիականությունը, որն իրականացվում է Առողջապահության նախարարության կողմից: Հայաստանի համար անհրաժեշտ միջին կալորիականությունը հաշվարկվել է դեռ 2004 թվականին (օրական մեկ շնչի հաշվով՝ 2 232 կիլոկալորիա): Ըստ որում, որպես բազիսային բնակիչներ են դիտարկվել չափահասները: Սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, աշխարհում սպառողական զամբյուղը հաշվարկվում է բնակչության երեք խմբերի՝ աշխատունակ քաղաքացիների, կենսաթոշակառուների և երեխաների համար, մինչդեռ հայկական զամբյուղը համառորեն շարունակում է բոլորին նույն կալորիականության սնունդ առաջարկել՝ առանց հաշվի առնելու տարիքային առանձնահատկությունները: Տեղին ենք համարում նշել այն փաստը, որ «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում ևս նշված է, որ կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը հաշվարկվում է սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբերի և բնակչության մեկ շնչի հաշվով, որտեղ սոցիալ-ժողովրդագրական հիմնական խմբեր ասելով ի նկատի են առնվում աշխատունակ բնակչությունը, թոշակառուները և երեխաները (հոդվ. 3):

Բացի այդ, սպառողական նվազագույն զամբյուղի արժեքը նորացնելու նպատակով ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը յուրաքանչյուր տարի իրականացնում է 208 սննդատեսակի գների ուսումնասիրություն: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ սպառողական զամբյուղում տեսակարար կշիռ են կազմում հացամթերքները, կաթնամթերքները, ինչպես նաև բանջարեղենը: Այսինքն, չկա հավասարակշռված պահանջարկ, ինչը խոսում է այն մասին, որ երկրում առկա է աղքատ բնակչության զգալի մաս, որը չի կարող թույլ տալ իրեն հավասարակշռված սննդակարգ: Մեկ այլ կարևոր հանգամանք է այն, որ հաշվարկներում հաշվի չեն առնվում ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների քանա-

[16] Տե՛ս http://visasam.ru/emigration/vybor/prozhitochniy-minimum-v-mire.html (մուտք՝ 03.05.2018):
[17] Սպառողական զամբյուղի բյուջեի չափի խնդիրներին կանդրադառնաք ստորև:
[18] Տե՛ս http://armstat.am/file/article/sv_12_17a_6200.pdf (մուտք՝ 03.05.2018):

կական փոփոխությունները. դրանք շարունակում են հիմնվել 2009թ. հարցումների վրա և ընդամենը ճշտվում են ընթացիկ տարվա գներին համապատասխան[19]:

Սպառման ընդհանուր կառուցվածքում հաջորդ խնդիրը կապված է պարենային և ոչ պարենային ապրանքների հարաբերակցության հետ: Եթե այդ ապրանքների հարաբերակցությունը զարգացած երկրներում կազմում է 20%, ապա Հայաստանում և ետխորհրդային պետություններում՝ միջինը 40-50%: Այս ցուցանիշը ևս վկայում է բնակչության բարեկեցության ցածր մակարդակի մասին և այն, որ զարգացած պետություններում սպառումն ունի լրիվ այլ կառուցվածք: Որոշակի տարբերություն կա նաև պարենային զամբյուղի արժեքի և նվազագույն կենսամակարդակի հարաբերակցության միջև: Ետխորհրդային երկրներում այս երկու ցուցանիշները գրեթե համընկնում են, զարգացած երկրներում այս թվերը տարբերվում են առնվազն 8-10 անգամ[20]:

ՀՀ-ում գործող նվազագույն կենսամակարդակը փաստորեն հանգում է միայն գլխավոր ֆիզիկական պահանջմունքների և հիմնական ծառայությունների բավարարմանը, իսկ աղքատության հաղթահարումը սեղմվել, վերածվել է նյութական նվազագույն կարիքների բավարարման գործընթացի, և նույնիսկ այս պայմաններում ՀՀ բնակչության 30%-ը չի կարողանում լուծել իր նյութական գոյության նվազագույն խնդիրները: Մինչդեռ սոցիալական արդարության դիրքերից կենսապահովման նվազագույն զամբյուղը պետք է նախատեսված լինի ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական և հոգևոր կարիքների բավարարման համար, որոնք հասարակության կողմից ճանաչվել են անհրաժեշտ սոցիալապես ընդունելի ապրելակերպի համար: Ըստ էության այդպիսին է նաև «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» օրենքի 3-րդ հոդվածի պահանջը: Այդ իսկ պատճառով հույժ կարևոր է, որպեսզի նշված օրենքի դրույթները գործի դրվեն ամբողջությամբ: Այսպես, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը սահմանվում է օրենքով: Սակայն մինչ օրս նմանօրինակ օրենք դեռ չի ընդունվել, մինչդեռ օրենսդրական ամրագրման անհրաժեշտություն ունեն նվազագույն պարենային զամբյուղի և սպառողական զամբյուղի պարունակությունը և արժեքները, ինչպես նաև աղքատության գիծը՝ հաշվի առնելով ոչ միայն նյութական-կենսաբանական, այլև սոցիալական ու հոգևոր-մշակութային աղքատության չափորոշիչները: Ավելին, հոդվածի նույն կետը նաև նշում է, որ կենսապահովման նվազագույն զամբյուղի կազմը և կառուցվածքը սահմանում է ՀՀ Կառավարությունը: Սակայն այս դրույթը ևս Կառավարության կողմից չի կատարվում: Օրինակ՝ ՀՀ ԱՎԾ կողմից, ըստ ՀՀ առողջապահության նախարարության մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2017թ. IV եռամսյակի համար կազմել է 57 417.5 դրամ, իսկ սոցիա-

[19] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական – վերլուծական զեկույց: Ըստ 2016թ-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան, 2017, էջ 227:

[20] Տե՛ս Мариам Восканян, Давид Манукян Проблемы расчета потребительской корзины в Армении, «21-й ВЕК», №4 (33), 2014г, էջ 127:

լական նվազագույն նորմացույցի հիման վրա հաշվակվող փաստացի ձևավորված սպառողական զամբյուղը՝ 48 525.3 դրամ[21]:

Վերը նշված հարցերի պատշաճ իրավական կարգավորման հրատապությունը պայմանավորված է նաև նրանով, որ ըստ հիշյալ օրենքի 4-րդ հոդվածի՝ կենսապահովման նվազագույն զամբյուղն ու բյուջեն հիմք են գնահատելու Հանրապետության բնակչության կենսամակարդակը, իսկ գնահատված ցուցանիշն օգտագործվում է պետական սոցիալական քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս. դրանով հիմնավորվում են նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի, նպաստի, չհարկվող եկամտի չափերը: Ցուցանիշների ոչ ճշգրիտ գնահատումը հնարավորություն չի տալիս արտացոլել երկրի առկա իրական պատկերը, որի արդյունքում էլ անհնար է դառնում ճշգրիտ և հասցեական քաղաքականության մշակումը:

Մարդկային զարգացման համաթիվ. երկրորդ կարևոր ցուցիչը հաշվարկվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի շրջանակում՝ երկրների միջև համեմատություններ անցկացնելու նպատակով: Որպես մարդկային կարողությունների հիմնական բնութագրեր են վերցվում հետևյալ ցուցանշները՝ կյանքի մակարդակ, գրագիտություն, կրթվածություն, երկարակեցություն: Ըստ 2017թ. հրապարակած հաշվետվության՝ այս ցուցանիշով աշխարհում առաջին տեղն է զբաղեցնում Նորվեգիան, այնուհետև՝ Ավստրալիան, 4-րդ տեղում՝ Գերմանիան: ԱՄՆ-ն գտնվում է 10-րդ տեղում, Ռուսաստանը՝ 49-րդ: Հայաստանը մտնում է զարգացած երկրների խմբի մեջ և իր վարկանիշով զբաղեցնում է 84-րդ տեղը՝ կիսելով այն Ուկրաինայի հետ: Սակայն Հայաստանը մարդկային զարգացման համաթվով զիջում է Բելարուսին 52, Ղազախստանին (56), Իրանին (69), Վրաստանին (70), Թուրքիային (71) և Ադրբեջանին (78)[22]:

Նվազագույն ամսական աշխատավարձը մարդու արժանապատիվ կյանքի պայմաններում ապրելու ապահովման գործիքներից մեկն է, որը, ուղղվելով կոնկրետ անձի, հանդիսանում է սոցիալական արդարության կոնկրետ հասցեական ցուցիչ: Նվազագույն ամսական աշխատավարձի վերաբերյալ դրույթներն ամրագրված են 1928 թ. հունիսի 16-ի «Նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի մասին» և 1970 թվականի հունիսի 22-ի «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին» թիվ 131 կոնվենցիաները: Արդարացի վարձատրման իրավունքը ամրագրված է նաև Եվրոպական սոցիալական խարտիայի 4-րդ հոդվածում: Աշխատողի նվազագույն ամսական աշխատավարձը տարբեր երկրներում սահմանվում է տարբեր կերպ, օրինակ՝ կարող է սահմանվել Կառավարության կողմից, տարբերվել ըստ շրջանների, լինել գործավարձով և ժամավճարով: Եվրոստատի տվյալներով 2018թ. Բելգիայում նվազագույն ամսական աշխատավարձը կազմում է 1562,59, Գերմանիայում՝ 7498, Մեծ Բրիտանիայում՝ 1400,99, ԱՄՆ-ում 1047,83, Իսպանիայում՝ 858,55, Հունաստանում՝ 683.76[23], Ռուսաստանում՝ 120, Լատվիայում՝ 430, Լիտվայում՝ 400, Բելառուսում 150,71 եվրո[24]:

---

[21] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-դեկտեմբերին»: Հավելված 2: Հետաքրքրաշարժ վիճակագրություն, էջեր 267-268:

[22] Տե՛ս Резюме. Доклад о человеческом развитии 2016. Человеческое развитие для всех и каждого. Опубликовано для Программы развития Организации Объединенных Наций (ПРООН), էջ 29: http://hdr.undp.org/sites/default/files/HDR2016_RU_Overview_Web.pdf (մուտք՝ 04.05.2018):

[23] http://ec.europa.eu/eurostat/web/labour-market/earnings/database (մուտք՝ 04.05.2018):

[24] https://wageindicator.org/main/salary/minimum-wage (մուտք՝ 04.05.2018):

Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափը սահմանվում է Նվազագույն ամսական աշխատավարձի մասին օրենքով, որի 1-ին հոդվածի համաձայն ՀՀ-ում սահմանվում է մեկ միասնական նվազագույն ամսական աշխատավարձ 55000 դրամի չափով, այսինքն՝ բացակայում է տարբերակված չափեր սահմանող որևէ օրենք: Եթե համեմատենք աշխատավարձի այս չափը կենսապահովման նվազագույն զամբյուղի հետ (57 417.5 դրամ), ապա կտեսնենք, որ դրանք գրեթե համընկնում են: Այսինքն՝ աշխատող անձն առանց ընտանիքի կարող է իր աշխատավարձով ապրել մոտ մեկ ամիս: Մինչդեռ պետք է հաշվի առնել, որ ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության նորմերի՝ նվազագույն աշխատավարձի կարգավորման հիմնական նպատակն է վարձու աշխատող անձանց անհրաժեշտ սոցիալական պաշտպանության տրամադրումը աշխատողի և նրա ընտանիքի կենսամակարդակի տեսանկյունից: Դա նշանակում է, որ նվազագույն աշխատավարձ սահմանելիս խոսքը գնում է վերջինիս նպատակային նշանակության մասին, այն է՝ ապահովել պատշաճ նվազագույն կենսամակարդակ ոչ միայն աշխատողի, այլ նաև նրա ընտանիքի համար[25]: Այնուամենայնիվ, արժանապատիվ կյանք ապահովելու համար հաշվի են առնվում նաև որոշակի լրացուցիչ գործոններ, ինչպիսիք են, օրինակ, սոցիալական ապահովման հիմնադրամներից իրականացվող վճարումները, տարբեր արտոնությունները, կրթաթոշակները և այլն:

Ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ Հայաստանն իր ցուցանիշներով մոտ է կանգնած ցածր կենսամակարդակ ապահովող երկրներին, ինչն օրակարգային հարց է դարձնում սոցիալական պետության ինստիտուտների հետագա զարգացման անհրաժեշտությունն ու սոցիալական շուկայական տնտեսության հիմքերի ձևավորումը: Իհարկե, այստեղ պետք է հաշվի առնել նաև բոլոր ծախսերը, որոնք իրականացվում են երկրի աշխարհաքաղաքական դիրքն ու խաղաղությունն ապահովելու համար: Սակայն, դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ սոցիալական արդարության այս կամ այն տեսանկյունները բնութագրող իրավական կարգադրագրերի և փաստացի ցուցանիշների միջև տարբերությունները էական չպետք է լինեն: Հակառակ դեպքում դա վկայում է այն բանի մասին, որ ՀՀ հասարակական և պետական կարգը, ինչպես նաև կառավարման համակարգն ունեն լուրջ թերություններ:

Ամբողջ վերը շարադրածը մեզ հիմք է տալիս սոցիալական արդարության սկզբունքը բնորոշել հետևյալ կերպ. **«Սոցիալական արդարությունը պետության և անհատի փոխադարձ սոցիալական պատասխանատվությունն ու պարտականություններն են, որի ուժով պետությունը պարտավորվում է յուրաքանչյուրի արժանապատիվ կյանքի համար ապահովել բարեկեցության որոշակի մակարդակ, նպաստել վերջինիս մասնակցությունը հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր կյանքին, իսկ անհատը պարտավորվում է լինել ինքնուրույն և սոցիալապես պատասխանատու իր գործողությունների համար»:**

[25] Նմանատիպ դրույթ է ամրագրում նաև Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 4-րդ հոդվածը:

Нуне Джомардян
Руководитель Центра международных связей и исследований Международного университета Евразия, заместитель заведующего юридической кафедры, соискатель кафедры

СОЦИАЛЬНАЯ СПРАВЕДЛИВОСТЬ КАК ОСНОВНОЙ ПРИНЦИП СОЦИАЛЬНОГО ГОСУДАРСТВА

В статье представлена конституционно-правовая характеристика социального государства. Подчеркнуты индикаторы фактического выражения принципа социальной справедливости, проанализированы особенности наиболее важных индикаторов. Автор предложил свое собственное определение социальной справедливости.

Ключевые слова: социальная справедливость, социальная рыночная экономика, индикатор, минимальная потребительская корзина, индекс развития человеческого потенциала, минимальный размер оплаты труда.

Nune Jomardyan
Head of International Relations and Research Center, Deputy Head of Law Department at Eurasia International University, Ph.D. Student

SOCIAL JUSTICE AS THE MAIN PRINCIPAL OF WELFARE STATE

The article presents the constitutional and legal features of social justice. The indicators in the priciple of social jusitice actual demonstration has been pointed out along with analyzing the peculiarities of the most important indicators, hereof. The author represents an own definition of socual justice.

Key words: social justice, social market economy, indicator, minimum expenditure basket, human development index, minimum monthly wage.